ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 փետրվարի 2011 թվականի N 63-Ա

ք. Հրազդան

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐՍԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների դրույթներով, ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրսերը նախատեսված քանակի թեկնածուներով համալրելու նպատակով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրս ընդունվելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ուսումնական հաստատություններում իրականացնել ռազմական ուսումնական հաստատությունների առաջին կուրսեր ընդունվող թեկնածուների ընտրության և նախապատրաստման աշխատանքներ՝ համաձայն զինվորական կոմիսարիատներից ներկայացված պլան-առաջադրանքների:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին, զինվորական կոմիսարներին, ուսումնական հաստատությունների, մարզատեխնիկական կազմակերպությունների տնօրեններին՝
1) Համակարգված ձևով նախապատրաստել միջոցառումների պլան ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար թեկնածուների ընտրության աշխատանքները բարձր մակարդակով կատարելու ուղղությամբ:
2) Ընտրել ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու թեկնածուներ, հաշվի առնելով նրանց ֆիզիկական պատրաստվածությունը, կարգապահությունը և գիտելիքների մակարդակը:
3) Թեկնածուներին մրցութային քննություններին գործուն աջակցություն ցուցաբերելու համար ուսումնական հաստատություններում կազմակերպել անհրաժեշտ առարկաների պարապմունքներ և խորհրդատվություններ:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ զինվորական կոմիսարիատների պահանջով, սահմանված կարգով անցկացնել թեկնածուների բժշկական զննություն զորակոչային բժիշկ-մասնագետների միջոցով:
4. Սույն որոշման կազմակերպման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի զինվորական կոմիսարների վրա:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ